

Արամ Իսաբեկյանը, իր ընկերների ու մտերիմների համար՝ Արամո, հերթական մի կատակ արեց եւ դարձավ 50 տարեկան: Ես գիտեմ, թե նման հոբելյանների առթիվ որքան հաճախ է օգտագործվում կադապար դարձած այս անհամ նախադասությունը՝ «Այդ է՞րբ դարձավ»... Բայց ինչով եմ ես մեղավոր, որ իրենց անձնագրային տվյալների հետ անհաշտ մարդիկ կան, եւ այդ անհաշտների մեջ առաջիններից մեկը հենց Արամոն է:

Բնավ միտք չունեմ քնարական զեղումների դիմելու, այս սկիզբն ինձ պարզապես անհրաժեշտ էր ասելու համար, որ Արամ Իսաբեկյանը, ի պատիվ իրեն, վերջակետի հասած, «ավարտուն» նկարիչ չէ, այն դեպքում, երբ հիսուն տարեկանում բնավ չի բացառվում ինքն իր հետ հաշտ լինելու բավական տխուր իրողությունը: Գոնե ինձ համար նախընտրելի են արվեստի ու գրականության այն մշակները, ովքեր անընդհատ որոնումների մեջ են, մեր ժամանակի խելագար ավեկոծումների մեջ փնտրում են այն հանգրվանները, որտեղ անհատն ու ժամանակը համընկնում են իրար: Ըստ իս, այս համընկնումից է արվեստը ծնվում, ավելի ճիշտ՝ նաեւ այս համընկնումից:

Արամ Իսաբեկյանը մերթ «մանկորեն» է նկարում եւ պարզ միջոցներով հասնում զարմանալի անմիջականության, մերթ բարդ զուգորդումներով հանգում է ջղագրգիռ էքսպրեսիայի, այսինքն՝ բաց նյարդի թելադրած արտահայտչականության, մերթ դասական մաքրությամբ աչքի ընկնող դիմանկարներ է ստեղծում, որոնցից կուզենայի անպայման առանձնացնել դստեր՝ Աննայի, հոր՝ անվանի նկարիչ Էդվարդ Իսաբեկյանի եւ գործընկերոջ՝ Փ. Միրզոյանի մեկը մյուսից փայլուն դիմանկարները: Նաեւ՝ հանդարտ ու խաղաղ նատյուրմորտները, ու թեեւ այդ բառը թարգմանաբար նշանակում է մեռած բնություն, նկարչի այդ տիպի գործերը բառարանային թարգմանության հակահիշերն են, այնքան կենդանի եւ թրթռուն, որքան կարող են լինել մարդու կենսագրության ոչ երեւացող, ոչ «սյուժետային», այլ թաքնված, զուգորդված զգացողությունները, որոնց Մարսել Պրուստը կոչել է կորուսյալ ժամանակի որոնումներ:

Այս ամենը (եւ դեռ շատ բան, որ չեմ հասցրել կամ չեմ կարողացել ասել) հիմք են տալիս պնդելու, որ Արամ Իսաբեկյանն իր արվեստում հասել է ինքնարտահայտման, որն անչափ էական ձեռքբերում է, որովհետեւ արվեստի յուրաքանչյուր գործի մեջ, լինի դա գրականություն, կերպարվեստ, թե երաժշտություն, առաջնայինը ստեղծագործողի եւ-ն է, իր յուրահատուկ ձայնը, հայացքը, ասելիքը, որոնցով նա տարբերվում է ուրիշներից եւ իրավունք ստանում գրավելու իր սեփական տարածությունը: Երբեմն մի ամբողջ կյանք է անցնում, դեգերում եւ արվեստի կաճաններով եւ չես կարողանում քո տարածության սահմանները գծել: Արամ Իսաբեկյանն իր ուրույն տեղն ունի եւ իր սեփական «հասցեն» մեր կերպարվեստում: Այս հանգամանքը արժեք հատուկ նշել, նկատի ունենալով, որ հայ կերպարվեստը, երեկ էլ, այսօր էլ, նշանակալի բարձունքների

է հասել, լավ նկարիչների թիվը բավական մեծ է մեզանում, հետևաբար՝ ինքնահաստատումն այդ բավական մեծ թվի մեջ դժվար հասանելի երազանք է:

Նկարիչների համար «ընտիր երկերի ժողովածուն» անհատական ցուցահանդեսն է, որը քննություն է այն առումով, որ քո բազմաթիվ ստեղծագործությունները, կողք-կողքի հայտնվելով, փաստորեն ընկալվում են նոր համատեքստում, առանձին վերցրած տպավորությունն այլ է եւ բոլորովին այլ՝ ընդհանուր շարքի մեջ: Ա. Իսաբեկյանը, Բացի Երեւանից, անհատական ցուցահանդեսներ է ունեցել Փարիզում, Կահիրեում, Լոնդոնում, Հալեպում...

Արամ Իսաբեկյանն այսօր ծանր բեռ է վերցրել իր ուսերին, ստանձնելով Գեղարվեստի ակադեմիայի ռեկտորի պարտականությունը: Կիսանգարի՞ արդյոք դա նրա ստեղծագործական գործունեությանը: Կարծում եմ ոչ: Ուսանող նկարիչների եթե ոչ խակ վարպետությունը, ապա նրանց «խելառ» պոռթկումները, ամեն ինչ ժխտելու եւ ամեն մի սկիզբ իրենցով պայմանավորելու ժպտահարույց, բայց բնական հավակնությունները ստեղծում են այն կենդանի, զարկերակող միջավայրը, որ ավագներից լավագույններին հեռու կպահի չափած-ձեւած, հավասարակշիռ, ինքնաբավ ապրելու կերպից: Լավ մանկավարժը արվեստում նա է, ով ոչ միայն սովորեցնում է, այլեւ մի քիչ էլ ինքն է սովորում:

Ընթերցողից գաղտնիք չպահելու համար վերջում ասեմ, որ Արամ Իսաբեկյանն իմ կրտսեր ընկերն է, այսինքն ինձ համար՝ պարզապես Արամո: Բայց, Աստված է վկա, որ ես գովեստի ավելորդ խոսքեր չշռայլեցի ընկերասիրությունից դրդված, այլ ընդամենը փորձեցի իմ ոչ մասնագիտական կարծիքը հայտնել գրականությանը «ազգակից» ճյուղի՝ կերպարվեստի բնագավառում ստեղծագործող մի նկարչի մասին, որը, ինչպես ինքն է հայտարարում, դարձել է 50 տարեկան: Ի՞նչ կմաղթեի Արամոյին՝ զենիթին հասած այս տարիքում: Ստեղծագործական տառապանքի առատ պահեր, ուրիշ էլ ի՞նչ, որովհետեւ այդ տեսակ տառապանքի մեջ է արվեստագետի մեծագույն երջանկությունը:

ՊԵՐՃ ԶԵՅԹՈՒՆՅԱՆ

[https://www.azg.am/index\\_wap.php?nl=AM&id=2002092517&Base\\_PUB=0](https://www.azg.am/index_wap.php?nl=AM&id=2002092517&Base_PUB=0)